1. Տիրամօրը չասել Աստուածածին, այլ Յիսուսածին։

2. Չ՚երկրպագել տէրունական օծեալ պատկերներին։

3. Չ՚ընդունել սրբոց բարեխօսութիւնը։

4. Չ՚ընդունել սուրբ եկեղեցւոյ աղօթքները ննջեցելոց համար։

5. Թողած սուրբ եկեղեցին՝ ժողովարանն էլ եկեղեցի են համարում իրանց համար։

6. Փրկական Սուրբ Խաչն չեն ընդունում։

7. Տեառնագրելն մեղք են համարում։

8. Սրբոց մասունքն և սրբոց պատկերաց յարգանքն այպանում են։ 9.՝ Արհամարում են քահանայագործութիւնը, եկեղեցւոյ սրբազան խորհրդոց արարմունքը, գերեզմանօրհնէքը, մատաղը։ 10. Ատում են և ոչինչ են համարում ննջեցելոց համար քահանայից ձեռքով եղած յիշելիքն ու յիշատակներն եկեղեցւոյ մէջ։

Տեղւոյն կօնսիստօրը վնասակար ճանաչելով Ս. վարժապետի ուսուցչական և քարոզչական գործողութիւններն, փակեց նորա ուսումնարանը և քննութիւն նշանակեց նորա վրայ . . . ։

Շամախու զինուորական նահանգապետը յայտնեց սինոդին, թէ Համբարձումեանը բարձրագոյն դասատարակութեամբ մանկանց դըրաւել է Շամախու հայ ազգի բնակիչներից շատերի մտադրութիւնը և թէ քահանաների բողոքը բարուրանք է և թշնամութիւն...։

66. 1858 թուի յուլիսին, Շամախու Յովհաննէս քահանայ Զաքարեանց, Սահակ քահանայ Տէր Սահակեանց, Յովհ. քհ. Մա-

---

դէպի երկնից աբքայութիւն, խարխափելով այս ու այն կողմն՝ հեռանում են ուղիղ ճանապարհից։

Ցիրաւի Քրիստոս ասաց. "Քննեցէք զգիրս". բայց ով պէտք է քննէ Սուրբ Գիրքը. Շամախեցի Ջաւատն ու Ջումշուտը, որ կարդալ անգամ չգիտեն, թէ ուսեալ ուսուցիչք, Սուրբ Գրոց աշակերտք, Աստուածաբան վարդապետք։

Մեր եկեղեցին երբէք չէ արգելել ժողովրդոց Սուրբ Գիրք կարդալ թող կարդան, որքան կամենան։ Երանի թէ ամեն քրիստոնեայ Ս Գրոց ընթերցմամբ և հետաքրքրութեամբ պարապի։ Մ. Ե. Ս.